

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

21.07.2020թ. կայացած շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկության

ք. Երևան

21.07.2020թ.

2020 թվականի հուլիսի 21-ին տեղի ունեցավ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը (հեռակա), որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունել հեռակա քվեարկության արդյունքում:

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2020 թվականի հուլիսի 17-ին և ավարտվեց 2020 թվականի հուլիսի 21-ին:

Քվեարկությանը մասնակցում էին

Կառավարման խորհրդի նախագահ՝

Տ.Խաչատրյան - Էկոնոմիկայի նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

- | | |
|---------------|--|
| Լ.Նանուշյան | - Առողջապահության նախարարի տեղակալ |
| Ա.Ասոյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար |
| Վ.Սիմոնյան | - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Ա.Հայրապետյան | - Ֆինանսների նախարարի տեղակալ |
| Ռ.Գրիգորյան | - Արդարադատության նախարարի առաջին տեղակալ |
| Կ.Սահակյան | - Երևանի պետական համալսարանի տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետի ֆինանսահաշվարկային ամբիոնի դասախոս |
| Կ.Միրզաբեկյան | - ՀԱՊՀ դասախոս, դոցենտ |
| Մ.Հակոբյան | - Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ |
| Ա.Մկրտչյան | - Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների ասոցիացիայի նախագահի գլխավոր խորհրդական |

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությանը չեն մասնակցել Ա.Հայրապետյանը և Ա.Մկրտչյանը:

Քվեարկության հարցեր

1. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020թ. երկրորդ եռամսյակի գործունեության /այդ թվում ստացված բողոքների մասին վիճակագրության/ հաշվետվությանը:
2. Հավանություն տալ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին:

Քվեարկության նյութերը ներկայացվեցին խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին քվեարկության:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1. Տ.Խաչատրյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
2. Լ.Նանուշյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
3. Ա.Ասոյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
4. Վ.Սիմոնյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
5. Ա.Հայրապետյանը՝ չի քվեարկել,
6. Ռ.Գրիգորյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
7. Կ.Սահակյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
8. Կ.Միրզաբեկյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
9. Մ.Հակոբյանը՝ 1-2 հարցերին քվեարկեց կողմ,
10. Ա.Մկրտչյանը՝ չի քվեարկել:

Քվեարկության արդյունքը՝ 8 կողմ:

Խորհրդի անդամների 8 կողմ ձայները հաշվի առնելով՝ Կառավարման խորհուրդը որոշեց.


1. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020թ. առաջին կիսամյակի գործունեության /այդ թվում ստացված բողոքների մասին վիճակագրության/ հաշվետվությանը:
2. Հավանություն տալ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին:

Կառավարման խորհրդի նախագահ՝



_____ **S. Խաչատրյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝



_____ **Ս. Պետրոսյան**
ստորագրություն